ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО “АРМАН-ЕРЕМ”
RA MARZ GEGHARKUNIK LTD “ARMAN-EREM”

ք. Գավառ, Գ. Միքաելյան 19, հեռ. (093) 19-66-68 էլ.փոստ armanerem@mail.ru
г. Гавар. Г. Микаелян 19, тел. (093) 19-66-68
c. Gavar. G. Mikaelyan 19, tel. (093) 19-66-68

№ 03/25- « » հուլիսի 2025թ.

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝
պարոն Ա. Փելեշյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության Կոմիտեի կողմից տրված լիցենզիա ՔՊԼ-000783-09) դիտարկելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 472117,56 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 3 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

<u>«Արման- Երեմ» ՍՊԸ</u>

Հաստատում եմ՝
« » հուլիսի 2025թ.

Տնօրեն՝
_______________ Յու. Ավետիսյան

<u>ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № 03/25</u>

Ըստ <u>ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի հիմնանորոգման</u> աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի.

Պատվիրատու՝ <u>Վանաձորի համայնքապետարան</u>
Նախագծող՝ <u>«Շինէքսպրտ» ՍՊԸ</u>

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման համար հիմք է ծառայել.

- ❖ Վանաձորի համայնքապետարանի հետ կնքված պայմանագիրը.
- ❖ Ճարտարապետահատակագծային N CPP0-0001-1111 առաջադրանքը տրված 07.02.2024թ. տրված Վանաձորի համայնքապետարանի կողմից.
- ❖ Ինժեներաերկրաբանական հետազոտության եզրակացությունը տրված «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՋՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից.
- ❖ Տախոմետրական հանույթը.
- ❖ Փաստացի ուսումնասիրության և չափագրման արդյունքները.

Փորձաքննության է ներկայացված՝

- ❖ Նախագիծ.
- ❖ Նախահաշիվ.

Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված է իրականացնել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի հիմնանորոգման աշխատանքներ:

Գոյություն ունեցող ճանապարհի երկայնական թեքությունները ըստ նախագծի նորմաների սահմաններում են: Ջրահեռացումը մակերեսային է, որը իրականացվում է երթևեկային մասի եզրաքարի կողքով:

Նախագծով փողոցի պարամետրերն են՝

- ❖ Երթևեկային մասի լայնությունը փոփոխական է՝ 9.02-25.88մ.
- ❖ Մայթերի միջին լայնությունը 2.0-3.0մ.

Նախագծային աշխատանքներն իրականացվել են համաձայն գործող նորմերի և տիպային նախագծերի՝ պահպանելով գոյություն ունեցող ճանապարհի պարամետրերը: Նախագծվող ճանապարհի հատակագիծը և երկայնական պրոֆիլը փոփոխության չեն ենթարկվել և երկարությունը կազմում է 1000.0 գծմ:

Հիմնվելով գեոդեզիական, ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա՝ նախագծով նախատեսված է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները՝

1. Հողային պաստառի վերականգնում:
2. Դիտահորերի վերականգնում:
3. Ճանապարհային հագուստի կառուցում:
4. Մայթերի կառուցում:
5. Ստորգետնյա սելավատարի կառուցում:
6. Ճանապարհի կահավորում (գծանշում):

Համաձայն նախագծի ճանապարհի հողային պաստառի կոնստրուկցիան և տիպերը բավարարում են գործող տեխնիկական նորմերին և պայմաններին:

***<u>Ճանապարհային հագուստ</u>***

Ճանապարհային հագուստի վերականգնման համար նախատեսված է իրականացնել՝

❖ Բազալտե աստիճանների ապամոնտաժում, նորի կառուցում – 54,0 գծմ:
❖ Գոյություն ունեցող ասֆալտբետոնե ծածկի քանդում – 15100,0 քմ:
❖ Հիմնատակի համահարթեցում մեխանիզմով – 15100,0 քմ:
❖ Խճավազային հիմքի կառուցում (C-6) h=15սմ – 15100,0 քմ:
❖ Հիմքի մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով – 15100,0 քմ:
❖ Խոշորահատիկ ա/բ ծածկի իրականացում h=6սմ – 15100,0 քմ:
❖ Մանրահատիկ ա/բ ծածկ իրականացում h=4սմ Б տիպի – 15100,0 քմ:

***Իջափեղեր և մուփքեր***

Իջատեղերում և մուտքերում նախատեսված է՝
❖ Գոյություն ունեցող ծածկի քանդում – 555,0 քմ:
❖ Հիմնատակի համահարթեցում մեխանիզմով – 555,0 քմ:
❖ Խճավազային հիմքի կառուցում (C-6) h=15սմ – 555,0 քմ:
❖ Б տիպի մանրահատիկ ա/բ ծածկի իրականացում h=5սմ – 555,0 քմ:

***Մայթեր***

Գոյություն ունեցող մայթերի վերականգնման համար նախատեսված է՝
❖ Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում բետոնե հիմքի հետ միասին – 4472,0 գծմ:
❖ Մայթի ծածկի քանդում – 427.8 խմ:
❖ Հիմնատակի համահարթեցում մեխանիզմով – 4367,0 քմ:
❖ 15x30 սմ բազալտե եզրաքարերի տեղադրում - 2487,0 գծմ:
❖ 10x20 սմ բազալտե եզրաշարերի տեղադրում – 2141,0 գծմ:
❖ Մայթի խճային նախաշերտի /10-20մմ ֆրակցիայի/ իրականացում 80մմ - 4367,0 քմ:
❖ Մանրահատիկ ա/բ ծածկ իրականացում h=3սմ Б տիպի – 4367,0 քմ:

***Դիփահորեր և անձրևահորեր***

Նախատեսված է՝
❖ Գոյություն ունեցող անձրևահորերի և ջրահեռացման խողովակաշարի մաքրում:
❖ Դիտահորերի ե/բ ծածկի սալերի ապամոնտաժում – 40 հատ:
❖ Դիտահորերի վերանորոգում և մակարդակների ուղղում միաձույլ բետոնով:
❖ Դիտահորերի ե/բ ծածկի սալերի տեղադրում – 40 հատ, որից 10 հատը օգտագործած:
❖ 1000x1000x1000մմ թուջե ցանցերով ե/բ հավաքովի անձրևահորերի տեղադրում – 35 հատ:

***Սփորգեփնյա սելավափար***

❖ Φ200մմ պոլիէթիլենե ծալքավոր խողովակների տեղադրում – 241.0 գծմ:
❖ Φ500մմ պոլիէթիլենե ծալքավոր խողովակների տեղադրում – 762.5 գծմ:
❖ 1000x1000x1000մմ թուջե ցանցերով ե/բ հավաքովի անձրևահորերի տեղադրում – 35 հատ:
❖ Φ1000մմ h=1,5մ հավաքովի ե/բ դիտահորերի տեղադրում – 18 հատ:

***Ճանապարհի կահավորում***

**բ) Երթևեկելի մասի գծանշում**

Գծանշման ընդհանուր մակերեսը կազմում է 248.6 քմ:

Նախագծում հաշվի են առնվել նաև հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը՝ ապահովելով ՀՀՇՆ IV-11.07.01-2006 և ՀՀԿՆ 23-101-2017 շինարարական նորմերի պահանջները:

Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների տեղերը և ծավալները բերված են համապատասխան գծագրերում և ամփոփագրերում:

Նախագիծը իրականացված է ՀՀ-ում ներկայիս գործող նախագծման, քաղաքաշինական և սանիտարական նորմերին և կանոններին /СП 31-110-2003 Շինարարության և նախագծման կանոնակարգեր, ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 52-01 «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ IV-11.07.01-2006, ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր», ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ», ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում»/ համապատասխան:

Ներկայացված է նախահաշիվ 473779,45 հազ. դրամ գումարով:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նախահաշվային փաստաթղթերը, «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է, որ այն կազմված է ՀՀ կառավարության առ 23,06,2011թ. N879-Ն որոշումով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» համաձայն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2316.88 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 3025.63:

Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 250802 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. №4 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

1. Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.0893
2. Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05
3. Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Դիտարկելով ներկայացված նյութերը «Արման-Երեմ» ՍՊԸ-ն նշում է՝

1. Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, (բաժին 12 կետ 3) ստորգետնյա և վերգետնյա կոմունիկացիաների տեղափոխումը պարտավոր են իրականացնել սեփականատերերը, ուստի այն ներառված չէ նախագծանախահաշվային փաստաթղթերում:
2. Նախագծում բացակայում է շահագրգիռ կազմակերպությունների համաձայնեցումները:
3. Տեղային նախահաշվում բետոնների վրա կիրառված պահեստավորման 2% գործակիցը պակասեցվել է:
4. Ճշտվել է սեւավատարի խողովակների երկարությունները:

Փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված բացթողումները, թերությունները վերացնելուց և ճշտումներ կատարելուց հետո նախահաշվային արժեքը կազմել է 472117,56 հազ. դրամ:

*Եզրակացություն՝*

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է 472117,56 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Փորձագետ՝ Ա. Շիշանյան